# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 65 - 66 (16868) ՇԱԲԱԹ 15 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ


ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ

## 12-ԱՄՅԱ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ՎԵՐՔԸ ՉԻ ՍՊԻԱՑԵԼ



*Օգոստոսի 8-ին, օգոստոսյան պատերազմի 12-րդ տարելիցի առիթով, Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, կառավարության անդամները, խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն, խորհրդարանական մեծեմասնության անդամները, Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, Վրաստանում հավատարմագրված դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչները, օգոստոսյան պատերազմին զոհված զինվորների հարազատները, Մուխաթգվերդիի եղբայրական գերեզմանատանը հարգանքի տուրք մատուցեցին օգոստոսյան պատերազմում զոհված հերոսների հիշատակին, ծաղկեպսակներ դրեցին նրանց շիրիմին:*

Գիորգի Գախարիայի խոսքով, յուրաքանչյուր քաղաքացու պարտքն է, հիշել օգոստոսյան պատերազում զոհված հերոսներին եւ հարգել նրանց հիշատակը:

- Այսօր Վրաստանի նորագույն պատմության մեջ շատ ծանր օր է, սակայն, չնայած դրան, մեր պարտքն է, ոչ միայն օգոստոսի 8-ին, այլեւ ամեն օր հիշել այս մարդկանց, հերոսներին եւ հարգել նրանց հիշատակը: Վրաստանն այս պատերազմում կորցրեց հարյուրավոր քաղաքացիներ ու զինվորներ, բռնազավթվեց Վրաստանի տարածքի 20 տոկոսը, որն այսօր վրաց պետականության ամենամեծ մարտահրավերն է: Մեզանից յուրաքանչյուրի պարտքն է, հիշել բոլոր զոհերին, ծառայել եւ հոգալ այս երկրի մասին, որպեսզի հասնենք վերջնական նպատակին, երկրի ապաբռնազավթմանը, տարածքային ամբողջականության վերականգնմանը,- հայտարարեց Գիորգի Գախարիան:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

## ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԵԿՆԱՐԿԸ ԿԱՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՀԻՄՔԵՐ ՉԿԱՆ»

*Օգոստոսի 12-ին, Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի նախագահությամբ, անցկացվեց միջգերատեսչական համակարգող խորհրդի հերթական նիստը, որտեղ քննարկվեց կորոնավիրուսի կապակցությամբ երկրում ստեղծված իրավիճակը, կանխագծվեցին համավարակով պայմանավորված սոցիալական եւ տնտեսական հիմնախնդիրների կարգավորման միջոցառումները:*



Նիստի ավարտից հետո, լրագրողների հետ հանդիպմանը, Գիորգի Գախարիան հայտարարեց, որ ուսումնական տարվա մեկնարկը ետաձգելու նախապայմաններ չկան, նաեւ չկա հիմք ընտրությունների ամսաթվի փոփոխման համար:

- Այսօրվա դրությամբ, չկա պայման, որ ուսումնական տարվա մեկնարկը հետաձգվի, եւ սեպտեմբերի 15-ից երեխաները դասասենյակներում չսկսեն կրթություն ստանալ: Ինչպես նաեւ չկա հիմք, որ ընտրությունների ամսաթի-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ». ԸՆՏՐԱՀԱՄԱՐԸ՝ 41

## «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ՍԿՍԵՑ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԸ

*Օգոստոսի 10-ին «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կառավարող կուսակցությունը սկսեց հոկտեմբերի 31-ին անցկացվելիք խորհրդարանական ընտրությունների քարոզաշավը:*

Քարոզարշավը մեկնարկեց Կախեթիի տարածաշրջանում, մասնավորապես՝ Թելավիում, որտեղ Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան տեղի ընտրողներին ներկայացրեց կուսակցության մեծամասնական պատգամավորության թեկնածու Իրակլի Քադագիշվիլուն:

Թեկնածուի ներկայացմանը ներկա էին եւ ելույթ ունեցան կուսակցության գլխավոր քարտուղար, Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, կուսակցության քաղաքական քարտուղար, պաշտպանության նախարար Իրակլի Ղարիբաշվիլին, ուրիշներ:

Մեծամասնական թեկնածուի ներկայացմանը, Գիորգի Գախարիան նշեց, որ ամեն ինչ պետք է արվի, որպեսզի Կախեթին ավելի շատ զարգանա: 2012 թվականից հետո, շատ գործ արվեց այս շրջանի համար: Կառավարության ղեկավարն ընդգծեց այն փաստը, որ եթե 2012 թվականին Կախեթիում հավաքվեց մոտ 52 000 տոննա խաղող, ապա 2019 թվականին այդ ցուցանիշը կազմեց 278 000 տոննա, որը 5 անգամ ավելի էր եւ որը, նրա խոս-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

## ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԻՆՉԵՎ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ը

*Օգոստոսի 12-ին Երեւանում, Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի նախագահությամբ, անցկացվեց կառավարության արտահերթ նիստ:*



Նիստում ընդունվեց որոշում, ըստ որի՝ Հայաստանում 2020 թվականի մարտի 16-ին հայտարարված եւ մի քանի անգամ երկարաձգված արտակարգ դրության ժամկետը երկարաձգվեց եւս մեկ ամսով՝ մինչեւ սեպտեմբերի 11-ը:

- Մենք ստիպված ենք հիմա եւս մեկ անգամ արտակարգ դրությունը երկարաձգել, հույս ունենք՝ վերջին անգամ,- ասաց վարչապետ Նիկոլ Փաշինյանը՝ ավելացնելով, որ այս անգամ արտակարգ դրության ռեժիմը կլինի ավելի մեղմ:

Կորոնավիրուսի համավարակով պայմանավորված երկրում հայտարարված արտակարգ դրության ժամկետը պետք է լրանար օգոստոսի 12-ին:

(Թեմայի շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՐԵԼԻՑ

## ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՆՇԵՑԻՆ «ԴԻԴԳՈՐՈԲԱՆ»

### ԹՇՆԱՄՈՒ ԴԵՄ ՎՐԱՑԻՆԵՐԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ ԿՌՎՈՒՄ ԷԻՆ ԵՎ ՀԱՅԵՐԸ



*Օգոստոսի 12-ին, Վրաստանում Թեթրիծղարոյի մունիցիպալիտետի Դիդգորիի դաշտավայրում, ինչպես նաեւ՝ Քութայիսիում եւ երկրի այլ վայրերում նշվեց «Դիդգորոբա» ժողովրդական տոնակատարությունը՝ ի պատիվ 1121 թվականին Դավիթ Շինարարի օրոք Դիդգորիի ճակատամարտում սելջուկ թուրքերի ջախջախմանը:*

Դիդգորոբայի հետ կապված Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան շնորհավորական ուղերձ է հղել.

«Շնորհավորում եմ Դիդգորոբայի կապակցությամբ: Դա Վրաստանի պատմության մեջ ամենամեծ հաղթանակն էր, երկրի միասնության մեծագույն օրինակը, մեծագույն նվիրվածությունը երկրին»,- ասված է վարչապետի ուղերձի մեջ:

Հատկանշական է Դիդգորիի ճակատամարտում (1121 թվականի օգոստոսի 12) Վրաստանի բանակի ազգային կազմը: Ինչպես երեւում է, զորքի հիմնական մասը կազմում էր անմիջականն-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ԵՐԿՐԻ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԶՈՀՎԱԾՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



Օգոստոսի 14-ին, Աբխազիայում եղբայրասպան ռազմական գործողությունները սկսելու 28-րդ տարելիցի առիթով, Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Թեա Ախվլեդիանին, պաշտպանության նախարար Իրակլի Ղարիբաշվիլին եւ Աբխազիայի Ինքնավար Հանրապետության կառավարության ղեկավար Ռուսլան Աբաշիձեն՝ ծաղկեպսակներ դրեցին Վրաստանի միասնության համար պայքարում զոհվածների հուշահամալիրում եւ հարգանքի տուրք մատուցեցին հերոսների հիշատակին:

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ

# 12-ԱՄՅԱ ՎԱՂԵՄՈՒԹՅԱՆ ՎԵՐՔԸ ՉԻ ՍՊԻԱՑԵԼ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

- Այս օրը ողբերգական է: Միեւնույն ժամանակ, սա մեր երկրի համար հույսի օր է: Սա մեր ճակատագիրն է, սակայն մենք հաղթահարել ենք եւ ապագայում եւս կհաղթահարենք ամեն բան:

Վրաստանի այսօրվա իրականությունն այն է, որ մեզ պատերազմը պարտության չմատնեց: Չնայած բռնազավթված տարածքների, մենք հզոր, ժողովրդավար, անկախ երկիր ենք: Դրա ապացույցն է այսօր եւ երեկ մեր միջազգային գործընկերների արձագանքները: Մենք զարգանում ենք եւ չենք խոնարհվում Ռուսաստանի առջեւ: Այսպիսին է եղել Վրաստանը եւ կլինի միշտ,- իր հերթին հայտարարեց Սալոմե Զուրաբիշվիլին՝ հավելելով, որ օգոստոսյան պատերազմում զոհված հերոսները Վրաստանի ուժն են:

Օգոստոսի 8-ին, ի հիշատակ օգոստոսյան պատերազմի զոհերի, Վրաստանի տարածքով պետական դրոշները բոլոր վարչական շենքերին իջեցվեցին: Դրոշներն իջեցվել են նաեւ արտասահմանում Վրաստանի դիվանագիտական ներկայացուցչություններում:

Հիշեցնենք, որ, ի պատասխան Աբխազիայի եւ Ցխինվալիի տարածաշրջանում ռուսական կողմի սադրիչ գործողությունների, վրացական գյուղերի ռմբակոծության, Վրաստանի իշխանությունները օգոստոսի 7-8-ին ձեռնամուխ եղան այդ տարածքներում սահմանադրական կարգուկանոնի հաստատմանը: Ռուսաստանը խաղաղության պարտադրման պատրվակով, Ռոքիի թունելով անցկացրեց անհամեմատ մեծ ուժեր, որոնք էլ, վերջին հաշվով, վրացական զինված ուժերի դեմ ռազմական գործողություններով վրաց զինուժին ստիպեցին նահանջել: Հնգօրյա դիմակայության արդյունքում, վրացական կողմից զոհվեց 168 զինծառայող, ոստիկանության 16 աշխատակից: Ռազմական գործողություններին զոհ գնաց 188 խաղաղ քաղաքացի: Օգոստոսի հնգօրյա պատերազմի արդյունքում, Ռուսաստանը օգոստոսի 26-ին ճանաչեց, այսպես կոչված, Հարավային Օսեթիայի եւ Աբխազիայի անկախությունը: Մինչ օրս էլ Ռուսաստանը հրաժարվում է լրիվությամբ կատարել օգոստոսի 16-ին կնքված, Ֆրանսիայի նախագահ Նիկոլյա Սարկոզիի միջնորդությամբ, հրադադարի պայմանագրի կետերը, ըստ որի՝ ռուսները պետք է բռնազավթված տարածքներից դուրս բերեին իրենց զորամիավորումները:

Օգոստոսյան պատերազմի արդյունքում շարունակում է բռնազավթված վիճակում գտնվել Վրաստանի տարածքի 20 տոկոսը:

# ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԵՑ ՀՈԳԵՀԱՆԳՍՏԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ

***Օգոստոսի 9-ին, Վիրահայոց թեմի Թբիլիսիի Հավլաբարի Սուրբ Էջմիածին եկեղեցում, թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանի հանդիսապետությամբ, կիրակնօրյա Սուրբ եւ Անմահ պատարագ մատուցեց արժանապատիվ Տեր Տաթեւ քահանա Մարուքյանը:***

Հավարտ Սուրբ պատարագի, Վիրահայոց թեմի առաջնորդական տեղապահը, հանուն հոգեւոր դասի, պաշտոնեության, բազում հավատացյալների, հարգանքի տուրք մատուցեց Վրաստանի տարածքային ամբողջականության համար զոհվածների հիշատակին, ցավակցություն հայտնեց սույն թվականի օգոստոսի 4-ին Բեյրութում տեղի ունեցած ուժգին պայթյունի առնչությամբ, որը պատճառ դարձավ մարդկային անմեղ զոհերի, կիսեց զոհվածների ընտանիքների վիշտը, որոնց շրջանում նաեւ հայորդիներ են:

Այնուհետեւ, թեմակալ առաջնորդի գլխավորությամբ եւ հոգեւոր դասի մասնակցությամբ, զոհվածների հոգու խաղաղության համար կատարվեց հոգեհանգստյան պաշտոն:

Վիրահայոց թեմի եկեղեցիներում բարձրացվեց աղոթք առ Աստված՝ բոլոր տուժածներին առողջություն պարգեւելու, ոտքի կանգնեցնելու խնդրանքով:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

# ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԵԿՆԱՐԿԸ ԿԱՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ՀԻՄՔԵՐ ՉԿԱՆ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

վը փոխվի,- հայտարարեց Վրաստանի վարչապետը:

Ուսումնական տարվա մեկնարկի հարցին անդրադարձավ նաեւ Վրաստանի առողջապահության նախարար Եկատերինե Տիկարաձեն:

Միջգերատեսչական համակարգող խորհրդի նիստից հետո՝ նա հայտարարեց, որ եթե չկրենք շնչադիմակներ եւ չպաշտպանենք սոցիալական հեռավորություն, հնարավոր է, ուսումն սկսելը լինի ռիսկի տակ:

Նախարարի խոսքով, քաղաքացիները պետք է առավել պաշտպանեն կանոնները, որպեսզի ուսման մեկնարկի հետ խնդիրներ չունենանք:

- Այս պահի դրությամբ, ուսման հետ կապված փոփոխություններ չենք նախատեսում: Կարեւոր է, քաղաքացիները հաշվի առնեն, որ այս ամենը կախված է մեր պահվածքից: Այսօր չենք կրում շնչադիմակներ, չկա սոցիալական հեռավորություն, սա, իհարկե, կտանի այն որոշման, որ հնարավոր է, սեպտեմբերին ուսումն սկսելը լինի ռիսկի ներքո: Ուստի, կարեւոր է մեր քաղաքացիների մոբիլիզացումը, որպեսզի մեր երեխաներին տանք անվտանգ դպրոցներում, կորոնավիրուսից ազատ միջավայրում կրթություն ստանալու հնարավորություն,- հայտարարել է Տիկարաձեն:

Հիշեցնենք, որ Վրաստանում ուսումնական գործընթացը մեկնարկում է սեպտեմբերի 15-ին:

ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՐԵԼԻՑ

# ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՆՇԵՑԻՆ «ԴԻԴԳՈՐՈԲԱՆ»

## ԹՇՆԱՄՈՒ ԴԵՄ ՎՐԱՑԻՆԵՐԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ ԿՌՎՈՒՄ ԷԻՆ ԵՎ ՀԱՅԵՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րեն Դավիթ Շինարարի զորագունդը, Վրաստանի բանակում կային հայեր, ղփչաղներ, օսեր, նաեւ ֆրանսիացի խաչակիրների մի փոքր ջոկատ:

Ինչպես վկայում են վրացական եւ հայկական պատմական աղբյուրները, Դավիթ Շինարար թագավորի մեծ տատը, այսինքն նրա պապի՝ Բագրատ Չորրորդ թագավորի մայրը հայոց թագավորի դուստրն էր եւ, որ Դավիթ Շինարարը դեռեւս 1118 թվականին թուրք սելջուկներից գրավել էր Լոռիի ամրոցը, որը վեր էր ածվել այդ տարածքում կազմավորված Տաշիր-Ձորագետի հայկական թագավորության կենտրոնի:

Այն ժամանակ ստեղծված պատմական իրավիճակի պայմաններում, հայկական պետականության վերականգնման հետ հույսերը հայերը կապեցին միայն վրաց թագավոր Դավիթ Շինարարի հետ: Մատթեւոս Ուռհայեցին գրում էր. «Դավիթ թագավորը սուրբ էր եւ վստահելի, աչքի էր ընկնում աստվածապաշտությամբ եւ արդարությամբ, նա դարձավ հայ ժողովրդի պաշտպանն ու բարեկամը: Նրան միացան հայկական բանակի ջոկատները»:

Թուրք սելջուկների դեմ Դիդգորիի ճակատամարտում Դավիթ Շինարարի հաղթանակը պայմանավորեց միջնադարում վրաց պետության կտրուկ զարգացումն ու առաջընթացը, որը շարունակվեց շուրջ 200 տարի:

ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ

# ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀՐԴԵՀՎԱԾ ՀՅՈՒՐԱՆՈՑ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐ...

***Ինչպես նշում են մի շարք վրացական լրատվամիջոցներ, օգոստոսի 8-ի երեկոյան, Ախալքալաքիում սրվել էր իրավիճակը: Ասում են, իբր դա պայմանավորված էր նրանով, որ կրկին «գլուխ բարձրացրեց» երկու ընտանիքների՝ Սիրանյանների ու Գաբրիելյանների տարիներ շարունակվող դիմակայությունը:***

Այս անգամ դա արտահայտվեց նրանով, որ, թեթեւ վիճաբանությունից հետո, Արթուր Գաբրիելյանը հրազենով մահացու վերք հասցրեց Ղուլիկամ գյուղի բնակիչ, 27-ամյա Վարդիկ Սիրանյանին: Սկսված իրարանցմանը, ղուլիկամցիները Ախալքալաքիի կենտրոնում այրեցին Արթուր Գաբրիելյանի սեփական տունը, հայրական տունն ու հյուրանոցը, ինչպես նաեւ կռվի մասնակիցներից՝ Կարեն Քոսյանի ու Գենա Զարմարյանի տները:

Իրավիճակի հանդարտեցման համար մոբիլիզացվեցին իրավապահ ուժեր: Դեպքի վայր ժամանեցին Սամցխե-Ջավախեթիի նահանգապետ Բեսիկ Ամիրանաշվիլին, Վրաստանի ՆԳ փոխնախարար Վլադիմեր Բորցվաձեն: Իրավապահներին հաջողվեց կանխել զանգվածային կռիվը, հանդարտեցնել կրքերը:

«Վրաստանի ներքին գործերի նախարարության Սամցխե-Ջավախեթիի ոստիկանության դեպարտամենտում, հետաքննությունը սկսվել է կանխամտածված սպանության, հրազենի ապօրինի գնում-պահում-կրում եւ տեղի ունեցած խմբովի բռնության փաստով, որին հաջորդել է՝ ուրիշի սեփականության ոչնչացում»,- ասված է ՆԳՆ-ն հաղորդագրության մեջ:

Գերատեսչության հաղորդմամբ, իրականացրած օպերատիվ-հետախուզական գործողությունների արդյունքում, 1983 թվականին ծնված քաղաքացի Արթուր Գաբրիելյանը ձերբակալվել է կանխամտածված սպանության եւ զենքի ապօրինի գնում-պահում-կրում մեղադրանքներով: Հանցագործությունը նախատեսում է 7-ից 15 տարով ազատազրկում:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)



ԲԵԼԱՌՈՒՍ

## ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԿՐԿԻՆ ՀԱՂԹԵԼ Է ԱԼԵՔՍԱՆԴՐ ԼՈՒԿԱՇԵՆԿՈՆ

*Օգոստոսի 9-ին, Բելառուսում անցկացվեցին նախագահական ընտրություններ: Նախագահի թեկնածու գրանցված հինգ թեկնածուի թվում էր նաեւ Բելառուսի գործող նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն:*

*Ընտրությունների նախնական արդյունքներով, Ալեքսանդր Լուկաշենկոն հավաքել է ձայների 79,7 տոկոսը, Սվետլանա Տիխանովսկայան՝ 6,8 տոկոսը, Աննա Կանոպացկայան՝ 2,3 տոկոսը, Անդրեյ Դմիտրիեւը՝ 1,1 տոկոսը, Սերգեյ Չերեչենը՝ 0,9 տոկոսը:*

*Նախնական արդյունքների հրապարակումից հետո, երկրի տարբեր քաղաքներում, առանձնապես մայրաքաղաք Մինսկում սկսվեցին բողոքի ցույցեր, որոնք ընթանում են իրավապահների հետ դիմակայությամբ: Նախնական տվյալներով՝ դիմակայության արդյունքում զոհվել է մեկ մարդ, տասնյակներ ստացել են մարմնական վնասվածքներ: Կան ձերբակալվածներ:*

ԼԻԲԱՆԱՆ

## ԿՈՐԾԱՆԱՐԱՐ ՊԱՅԹՅՈՒՆԻՆ ՀԵՏԵՎԵՑԻՆ ԲՈՂՈՔԻ ՑՈՒՅՑԵՐԸ

*Ինչպես արդեն հաղորդել ենք, օգոստոսի 4-ին Բեյրութի նավահանգստում տեղի ունեցավ հզոր պայթյուն, որի արդյունքում զոհվեց 154 եւ վնասվածքներ ստացան շուրջ 5 հազար մարդ:*

*Պայթյունի հաջորդ օրվանից, Բեյրութում սկսվեցին հակակառավարական ցույցերը: Բողոքի ցույցերին մասնակցում են հազարավոր մարդիկ, որոնք պահանջում են կառավարության հրաժարականը:*

*Վերջին տվյալներով, Բեյրութում տեղի ունեցած բախումների արդյունքում, ավելի քան 230 հոգի ստացել են վնասվածքներ, նրանցից ոմանք տեղափոխվել են մոտակա հիվանդանոցներ: Ներքին գործերի նախարարությունից հայտնել են, որ զանգվածային անկարգությունների հետեւանքով մահացել է Անվտանգության ուժերի մեկ աշխատակից:*

*Երկրի վարչապետ Հասան Դիաբը, ելույթ էր ունեցել եւ տեղի բնակիչներին հայտնել, որ նախարարների խորհրդի հաջորդ նիստի ժամանակ կքննարկեն խորհրդարանական ընտրությունները վաղաժամ անցկացնելու մասին նախագիծը:*

ՈՒԿՐԱԻՆԱ

## ԴՈՒՐՍ ԵԿԱՎ ԱՊՀ-Ի ԵՎՍ ԵՐԵՔ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐԻՑ

*Ուկրաինան դուրս է եկել ԱՊՀ-ի շրջանակներում ստորագրված եւս երեք համաձայնագրերից: Ուկրաինայի կառավարությունը, մասնավորապես, դադարեցրել է Համագործակցության պետությունների սահմանապահ զորքերի համար զինվորական կադրերի պատրաստման եւ որակավորման բարձրացման բնագավառում համագործակցության մասին, մշակույթի բնագավառում համագործակցության մասին, ինչպես նաեւ՝ ԱՊՀ-ի անդամների Մշակութային համագործակցության խորհրդի ստեղծման մասին համաձայնագրի գործողությունը:*

*2014 թվականի փետրվարին, Ուկրաինայում պետական հեղաշրջումից հետո, երկրի նոր ղեկավարությունը հայտարարեց, որ սկսում է ԱՊՀ-ից դուրս գալու գործընթացը: 2018 թվականի մայիսին Պյոտր Պորոշենկոն, որն այն ժամանակ զբաղեցնում էր պետության ղեկավարի պաշտոնը, ստորագրեց հրամանագիր՝ Համագործակցության կանոնադրական մարմինների աշխատանքին Ուկրաինայի մասնակցության վերջնական դադարեցման մասին:*

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

## ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱՆ ԱԽԱԼՑԻԽԵՈՒՄ



***Օգոստոսի 9-ին, Ախալցիխեում Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեի եւ կառավարության անդամների հետ միասին, ներկա գտնվեց Շալվա Ախալցիխելու անվան նորակառույց տաճարի բացման հանդիսավոր արարողությանը:***



Հանդիսավոր պատարագը, քահանաների հետ միասին, անց է կացրել Վրաստանի կաթողիկոս-պատրիարքի քորեպիսկոպոս, Ախալցիխեի եւ Տաո-Կլարջեթիի Միտրոպոլիտ Թեոդորեն: Նա շնորհակալություն հայտնեց Վրաստանի կառավարության անդամներին՝ տաճարի բացմանը մասնակցելու համար, եւ օրհնեց բոլոր նրանց, ովքեր մասնակցություն են ունեցել տաճարի ընդհատված շինարարության ավարտի մեջ:

Տաճարի բացման հանդիսավոր արարողությանը ելույթ ունեցան Վրաստանի վարչապետն ու խորհրդարանի նախագահը:

Ինչպես իր խոսքում նշեց Գիորգի Գախարիան, Ախալցիխեում Շալվա Ախալցիխելիի տաճարի բացումը մեծ տոն է ոչ միայն Ախալցիխեի, այլեւ ողջ Վրաստանի համար:

ՊԵՏԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ 7 ՏՆԵՐՈՒՄ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ 61 ԿԵՆՏՐՈՆՆԵՐՈՒՄ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՄՐԱԳՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ ՎԵՐԱՑՎՈՒՄ Է

იუსტიციის სახლი

***Օգոստոսի 11-ին, Արդարադատության 7 տներում եւ հասարակական 61 կենտրոններում ու դրանց տարածքային ծառայություններում, որտեղ քաղաքացիների մեծ հոսք չի վավերացվում, նախնական ամրագրման համակարգը վերացվում է:***

Արդարադատության նախարարության տեղեկատվությամբ, օգոստոսի 11-ից քաղաքացիներին, առանց նախնական ամրագրման, սպասարկում կցուցաբերեն Ղազբեգիի, Ղվարելիի, Բորժոմիի, Խոնիի, Թիանեթիի, Մարտվիլիի, Օնիի Արդարադատության տան մասնաճյուղերում, ինչպես նաեւ՝ Լենտեխիի, Ամբրոլաուրիի, Վալեի, Ադիգենիի, Շուախեւիի, Ցագերիի, Թեթրիծղարոյի, Խարագաուլիի եւ այլ բնակավայրերի հասարակական կենտրոններում: Միաժամանակ, ամրագրումը վերացվում է տարածքային այն ծառայություններում, որտեղ մինչեւ համավարակը ամսական մարդկային հոսքը կազմում էր միջինը՝ 600 մարդ:

Նախարարության տեղեկատվությամբ, վերոնշյալ չափորոշիչին համապատասխանում է նաեւ Արդարադատության տան Մեստիայի մասնաճյուղը, թեպետ այդտեղ ամրագրման համակարգը կպահպանվի:

Ինչ վերաբերում է այն մասնաճյուղերին, որտեղ աշխատանքը կշարունակվի, առողջապահության նախարարության հանձնարարականների պահպանման նպատակով, սպասարկումը նախկինի նման կիրականացվի նախնական ամրագրման համակարգով:

### ԼՈՒՐԵՐ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻՑ

#### ԴԻՊԼՈՄՆԵՐ՝ ԱԽԱԼՔԱԼԱՔՑԻ ՄԱՐԶԻԿՆԵՐԻՆ ԵՎ ՄԱՐԶԻՉՆԵՐԻՆ

*Սամցխե-Ջավախեթիի երկրամասի նահանգապետ Բեսիկ Ամիրանաշվիլին, միջազգային մարզական մրցաշարերում ձեռք բերած հաջողության համար, դիպլոմներ հանձնեց ախալքալաքցի 17 մարզիկների եւ 5 մարզիչների: Արարողությանը ներկա էին երկրամասի փոխնահանգապետ Շոթա Ռուստիաշվիլին, Ախալքալաքիի մունիցիպալիտետի քաղաքապետ Յուրի Հունանյանը եւ սակրեբուլոյի նախագահ Նաիրի Իրիցյանը:*

#### ՊԱՐԵՆԱՄԹԵՐՔ՝ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԿԱՐԻՔԱՎՈՐՆԵՐԻՆ

*Ախալցիխեի մունիցիպալիտետի քաղաքապետի առաջին տեղակալ Գուրամ Մելիքիձեն, տեղական իշխանության ներկայացուցիչների հետ, պարենամթերքի փաթեթներ փոխանցեց սոցիալապես անապահով ընտանիքներին: Ալյուր, շաքար, բրինձ, մանկարոն եւ ձեթ ընդգրկող փաթեթներ տրվեցին 121 ընտանիքների: Նշենք, որ սոցիալական նման օգնությունը մունիցիպալիտետում իրականացվում է տարվա ընթացքում մի քանի անգամ:*

#### ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ ԲՈԼՆԻՍԻՈՒՄ

*Օգոստոսի 12-ին, Քվեմո Քարթլիի երկրամասի նահանգապետ Շոթա Ռեխվիաշվիլու նախագահությամբ, անցկացվեց երկրամասային վարչության խորհրդատվական խորհրդի հերթական նիստը: Նիստում երկրամասի եւ մունիցիպալիտետների ղեկավարները քննարկեցին տարածաշրջանի զարգացման ծրագրի փոփոխությունները, խոսեցին հանրակրթական եւ ճանապարհային ենթակառույցների կարգավորման համար անհրաժեշտ միջոցառումների ֆինանսավորման իրականացման մասին:*

შემოსავლების სამსახური

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

## ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է ՄԱՔՍԱՆԵՆԳԱՅԻՆ ԾԽԱԽՈՏԻ ՆԵՐԿՐՄԱՆ ՓԱՍՏ



Ընթացիկ տարվա հուլիսի 10-ից օգոստոսի 10-ը ներառյալ, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիտորինգի դեպարտամենտի Սամեգրելոյի, Գուրիայի եւ Զեմո Սվանեթիի վարչության աշխատակիցների կողմից իրականացված ընթացիկ ստուգիչ գործողությունների արդյունքում, ընդհանուր առմամբ, բացահայտվել է 7311 տուփ մաքսանենգային ծխախոտ, 6520 գլանակ եւ 156,410 կիլոգրամ թութունի փոխադրման 115 փաստ: Այդ փաստերից երկուսը ներառում են քրեական օրենսդրության խախտման նշաններ:

Վրաստանի հարկային օրենսգրքի 192 հոդվածի 5-րդ մասի համաձայն, օրինախախտում թույլ տված քաղաքացիների ապրանքն առգրավվել է:

## ՇՈՒՐՋ 3 ՀԱԶԱՐ ՄԱՔՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՄՈՏ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ ՉԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

***Ներկա դրությամբ, կորոնավիրուսի (COVID-19) ռիսկի խմբերի նպատակային թեստավորման շրջանակներում, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային անցակետերում եւ ձեւակերպման տնտեսական գոտիներում, ստուգման ենթարկվեց շուրջ մաքսային 3 հազար աշխատակից:***

Ներկա փուլում նրանցից ոչ մեկի մոտ կորոնավիրուս չի հայտնաբերվել: Լուգարի լաբորատորիա առաքված նմուշների պատասխաններում COVID-19-ի առկայությունը բացասական է:

Միջգերատեսչական համակարգող խորհրդի որոշմամբ, հիվանդությունների վերահսկողության եւ հասարակական առողջապահության ազգային կենտրոնի հետ մեկտեղ, կորոնավիրուսի լրիվ թեստավորման գործընթացը մշտապես իրականացվում է եկամուտների ծառայության մաքսային մյուս անցակետերում եւ ձեւակերպման տնտեսական գոտիներում:




## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ՝ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՓՈՍՏԻ ՄԻՋԵՎ

***Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության եւ Վրաստանի փոստի միջեւ ձեւակերպվել է փոխհամագործակցության հուշագիր: Փաստաթուղթը ստորագրեցին երկու գերատեսչությունների ղեկավարներ՝ Լեւան Կակավան եւ Լեւան Չիկվաիձեն:***



Հուշագրի ձեւակերպման նպատակն է՝ միջազգային առեւտրի մասնակից անձանց համար սահմանի հատման դյուրացված մաքսային վերահսկողության ընթացակարգի ու վերահսկողության իրականացում: Նաեւ սպասարկման որակի բարելավում եւ տեղեկատվության նախնական վերամշակման ապահովում:

Հատկանշական է, որ Վրաստանի փոստը համաշխարհային փոստային կապի նախագծի (SECUREX) շրջանակներում ներառված է նախնական մաքսային հայտագրման էլեկտրոնային համակարգում, որը նախատեսում է փոստային վարչակազմի ու եկամուտների ծառայության մաքսային դեպարտամենտի միջեւ փոխանցումների վերաբերյալ տեղեկատվության նախնական փոխանակում:

Ծրագրային նոր ապահովման միջազգային համակարգում ներառումը համաշխարհային փոստային կապի տեխնոլոգիաների կենտրոնի եւ «UNCTAD» փորձագետների հետ միասին, կիրականացնեն Վրաստանի փոստը եւ երկրի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի ու մաքսային դեպարտամենտի աշխատակիցները:

Հանդիպմանը եկամուտների ծառայության պետ Լեւան Կակավան խոսեց կողմերի միջեւ ձեւավորված հուշագրի նշանակության մասին եւ նշեց, որ այդ համագործակցությունը կդյուրացնի երկու գերատեսչությունների միջեւ տեղեկատվության նախնական փոխանակումն ու մշակումը:

- Վերոնշյալ նախագծի հաջող իրականացումը կնվազեցնի մաքսային ձեւակերպումների ու ընթացակարգերի համար անհրաժեշտ ժամանակը: Միաժամանակ, բարձր չափորոշիչներով սպասարկումներ կապահովի յուրաքանչյուր փոխանցումը հասցեատիրոջը ժամանակին հասցնելու ուղղությամբ, ինչը կպայմանավորի եկամուտների ծառայության եւ Վրաստանի փոստի առաջընթացը ինչպես տեղական, այնպես էլ՝ միջազգային շուկայում,- հայտարարեց Լեւան Կակավան:

Վերոնշյալ նախագծի պիլոտային ծրագրի կիրարկումը կանցկացվի 2021 թվականի հունվարից:

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ». ԸՆՏՐԱՀԱՄԱՐԸ՝ 41

# «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԸ» ՍԿՍԵՑ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

քով, համատեղ աշխատանքի արդյունքն է:

Գիորգի Գախարիան նշեց, որ պետք է շարունակվեն բոլոր այն նախագծերն ու ծրագրերը, որոնք իրականացվում են Կախեթիի զարգացման համար, եւ այդ ամենը պետք է արվի «Վրացական երազանքի» մեծամասնական պատգամավորի թեկնածու Իրակլի Քադագիշվիլու հետ միասին:

Վարչապետի խոսքով, Իրակլի Քադագիշվիլին հանգամանորեն ծանոթ է շրջանի բոլոր խնդիրներին, եւ նա այս շրջանի արժանի զավակն է:

- Իրակլի Քադագիշվիլին այն մարդն է, ով հանգամանորեն ծանոթ է շրջանի բոլոր խնդիրներին, եւ նա այս շրջանի արժանի զավակն է: Նա այն մարդն է, ում երկար ժամանակ անհրաժեշտ չի լինի ուսումնասիրել խնդիրները: Նա այն մարդն է, ով ընտրությունների հաջորդ օրը կսկսի աշխատել այս շրջանի առավել զարգացման համար: Մենք բոլորս ամեն բան պետք է անենք՝ Թելավիի բարօրության համար,- հայտարարեց Գիորգի Գախարիան՝ մեծամասնական պատգամավորի թեկնածուին առաջադրելիս:



Հիշեցնենք, որ «Վրացական երազանք» կուսակցությունը դեռեւս հուլիսի 20-ին ներկայացրեց 30 մեծամասնական պատգամավորների թեկնածուներին:

Վրաստանում 2020 թվականի խորհրդարանական ընտրությունները տեղի կունենան հոկտեմբերի 31-ին: Վերջերս ընդունված սահմանադրական փոփոխությունների արդյունքում, Վրաստանի նոր խորհրդարանը կձեւավորվի 120 համամասնական, 30 մեծամասնական կարգով ընտրված պատգամավորներից:

# ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ ԵՎ ՆԻՆՈԾՄԻՆԴԱՅՈՒՄ ԿԱՌԱՎԱՐՈՂ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-ԻՆ ՍԱՄՎԵԼ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ ԿՆԵՐԿԱՅԱՑՆԻ ՈՐՊԵՍ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ



*Ինչպես նշեցինք, օգոստոսի 10-ին «Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» քաղաքական միավորումը՝ մեծամասնական խորհրդարանական թեկնածուների ներկայացմամբ տարածաշրջաններում սկսեց հոկտեմբերի 31-ին անցկացվելիք խորհրդարանական ընտրությունների քարոզարշավը:*

Ինչպես «Վրաստանին» տեղեկացրին «Վրացական երազանքի» ընտրական շտաբից, Կախեթիի երկրամասում մեկնարկած քարոզարշավը աստիճանաբար իրականացվելու է երկրի բոլոր տարածաշրջաններում: Մշակված ծրագրի համաձայն՝ Ախալքալաքիում եւ Նինոծմինդայում «Վրացական երազանքի» կողմից թեկնածուին ներկայացնելը տեղի կունենա սեպտեմբերի 14-ին:

Հիշեցնենք, որ հուլիսի 20-ին, Կոջորիում մեծամասնական թեկնածուներին ներկայացնելու շնորհանդեսին, կառավարող կուսակցությունը Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի ընտրատարածքից առաջադրել է Վրաստանի խորհրդարանի ներկայիս գումարման համամասնական պատգամավոր Սամվել Մանուկյանի թեկնածությունը:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ՝ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

# ԵՐԲ ԺԱՄԱՆԱԿԸ ՎԱՏՆՈՒՄ ԵՆ ՄԻՄՅԱՆՑ ՎԱՐԿԱԲԵԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

## ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔՆԵՐՆ ՈՒ ԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԸ

*Ակնհայտ է, որ այսօր Վրաստանը թեւակոխել է «նախընտրական պատերազմի» ժամանակահատված եւ այդ «պատերազմում» առաջնագիծ են մղվել հեռուստատեսային ընդդիմադիր այնպիսի ալիքներ, ինչպիսիք են «Մթավարին», «Պիրվելին», «Փորմուլան», որոնք ջանք չեն խնայում վարկաբեկելու, նսեմացնելու «Երազանքի» ձեռքբերումներն ու ծրագրերը:*

Ըստ այդ ալիքների, եթե որեւէ մեկը սայթաքում է կամ Աստված մի արասցե ընկնում-կոտրում է վիզը, մեղավոր է «ներկայիս փթած» համակարգը: Թեպետ «Երազանքն» էլ զրկված չէ իրեն պաշտպանող ալիքներից, ինչպիսիք են «Իմեդին», «Մաեստրոն», «Ռուսթավին» եւ «Պալիտրանյուսը»:

Միանգամից նշենք, որ այս «նախընտրական պատերազմում» արժանապատվորեն է ներգրավվել «Պոստիվի» հեռուստաընկերությունը, որը առաջին հայացքից այս իրարանցման մեջ «աղքատ ազգականի» դերում է, թեպետ աստիճանաբար ընդլայնում է իր լսարանը, դառնում նշանակալի ազդեցիկ ուժ:

Ինչ վերաբերում է առանձին հաղորդումներին, ապա վերոնշյալ ընդդիմադիր ալիքների բացահայտ կեղծ, մյուսների վարկաբեկմանը նպատակամղված հաղորդումներին հաջողությամբ հակադրվում են «Մեդիա ռենտգեն», «Բաչո եւ Գուրի» «Սամչի», ինչպես նաեւ Ժորժոլիանու շոուն:

# ԴՄԱՆԻՍԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ ՎՏԱՐԵԼ ԵՆ «ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔԻ» ՇԱՐՔԵՐԻՑ

*Դմանիսիի մունիցիպալիտետի քաղաքապետ Գիորգի Տատուաշվիլուն վտարել են «Վրացական երազանքի» շարքերից: Վտարման պատճառը «Վրացական երազանքին» մրցակիցների աջակցությունն է:*

«Վրացական երազանք-ժողովրդավարական Վրաստան» կուսակցության քարտուղարության որոշմամբ՝ Դմանիսիի շրջանային կազմակերպության նախագահ Գիորգի Տատուաշվիլին, որը միաժամանակ զբաղեցնում էր նաեւ Դմանիսիի քաղաքապետի պաշտոնը, վտարվել է կուսակցության շարքերից:

Վտարման պատճառը կուսակցական կարգապահության կոպիտ խախտումն է, որն արտահայտվել է նրա կողմից «Վրացական երազանքին» մրցակից թեկնածուների նախընտրական քարոզարշավի աջակցության մեջ»,- ասված է քարտուղարության հայտարարության մեջ:

# ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ 68 ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԻՑ 44-Ը ԳՐԱՆՑՎԵԼ Է

## 15 ՀԱՅՏ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՓՈՒԼՈՒՄ Է, 9 ՍՈՒԲՅԵԿՏ ՄԵՐԺՎԵԼ Է

*Ինչպես արդեն հաղորդել ենք, հոկտեմբերի 31-ին անկացվելիք խորհրդարանական ընտրություններին մասնակցելու համար հայտ էր ներկայացրել 68 կուսակցություն:*

Վրաստանի կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ օգոստոսի 14-ի տվյալներով, հայտ նեկայացրած 68 կուսակցությունից 44-ն արդեն գրանցվել է, 15 կուսակցության հայտը քննարկման փուլում է, իսկ 9 կուսակցություն մերժում է ստացել:

Հիշեցնենք, որ խորհրդարանական ընտրություններին մասնակցության գրանցվելու համար դիմումներ ներկայացնելու վերջնաժամկետը լրանում է սեպտեմբերի սկզբին՝ ընտրություններից 57 օր առաջ: Ընտրություններին մասնակցող սուբյեկտների վերջնական ցուցակը հայտնի կդառնա քվեարկության օրվանից 30 օր առաջ: Հետեւաբար, բացառված չէ, որ առաջիկա խորհրդարանական ընտրությունները, մասնակից ընտրական սուբյեկտների թվաքանակով, կարող են լինել ռեկորդային, քանի որ քննարկման փուլում գտնվող հայտերից մի քանիսի հաստատման դեպքում էլ, մասնակից սուբյեկտների թիվը կարող է հասնել 5 տասնյակի:

Նշենք, որ, ընտրական օրենսգրքում իրականացված փոփոխություններից ելնելով, այն կուսակցությունները, որոնք վերջին ընտրություններում չէին կարողացել ստանալ 15 հազար ձայն, ստիպված կլինեն ԿԸՀ-ին ներկայացնել 5 հազար կողմնակիցների ստորագրություններ: Մնացածը գրանցվում են ինքնաբերաբար:

# «ԼԵԼՈՆ» ՆԵՐԿԱՅԱՑՐԵՑ 25 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻՆ

Օգոստոսի 12-ին, Մցխեթայում հանդիսավոր պայմաններում անցկացվեց «Լելոն» Վրաստանի համար» քաղաքական միավորման կողմից մեծամասնական պատգամավորության թեկնածուների ներկայացման արարողությունը: Վրաստանի 30 ընտրատարածքներից 25-ում «Լելոյի» կողմից առաջադրված թեկնածուներին ներկայացրեց քաղաքական միավորման նախագահի Մամուկա Խազարաձեն:

Ներկայացված թեկնածուների թվում են գործարար Բադրի Ջափարիձեն, Վրաստանի խորհրդարանի երեք գումարումների պատգամավոր, Վրաստանի նախկին նախագահի քաղաքական խորհրդական Փիքրիա Չիխրաձեն, ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության շարժման ակտիվիստ Մուրադ Մուրադովը եւ ուրիշներ: Նշենք, որ «Լելո» քաղաքական միավորման կողմից Ախալքալաքի-Նինոծմինդա, Բոլնիսի-Դմանիսի, Թեթրիծղարո, Ծալկա ընտրատարածքներում թեկնածու չի առաջադրվել: Առաջադրումը կլինի մոտ օրերս:

ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՈՒՄ

# ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀՐԴԵՀՎԱԾ ՀՅՈՒՐԱՆՈՑ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐ...

(Սկիզբը՝ 2-րդ էջում)

«Հետաքննությամբ պարզվում է, որ մեղադրյալ Ա.Գ.-ն, վեճի ժամանակ հրազենից մահացու վիրավորել է 1993թ. ծնված Վ.Ս.-ին: Վերջինս մահացել է հիվանդանոցի ճանապարհին:

Մեղադրյալին խուզարկելու ժամանակ իրավապահներն առգրավել են զենքը:

Իրավապահները Ա.Գ.-ին ձերբակալել են տեղի ունեցած միջադեպից մի քանի ժամ անց: Հետաքննություն է ընթանում Վրաստանի ՔՕ 108-րդ եւ 236-րդ հոդվածի III եւ IV մասերով, ինչը ենթադրում է կանխամտածված սպանություն եւ զենքի ապօրինի գնում-պահում-կրում»,- ասված է ՆԳՆ-ն հաղորդագրության մեջ:

Գերատեսչության տեղեկությամբ, այս պահին քննչական գործողություններ են ընթանում խմբակային բռնության կազմակերպման եւ դրան մասնակցության փաստով, այլ հանցագործներին հայտնաբերելու ուղղությամբ:

Օգոստոսի 11-ին, Ախալցիխեի շրջանային դատարանում, հեռավար ռեժիմով կայացել է Ախալքալաքիում տեղի ունեցած սպանության գործով դատավարությունը: Մեղադրյալ Արթուր Գաբրիելյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել նախնական կալանքը:

Վրաստանի ՆԳ փոխնախարար Վլադիմիր Բորցվաձեի հայտարարությամբ՝ ներկայումս իրավիճակը կայուն է, Ախալքալաքիում կենտրոնացված են ոստիկանության ուժերը, որոնք տեղում իրականացնում են կանխարգելիչ միջոցառումներ, որպեսզի պաշտպանված լինի հասարակական կարգն ու անվտանգությունը:

Նշենք, որ դատարանը Արթուր Գաբրիելյանին սահմանեց երկամսյա նախնական կալանք, թեպետ վերջինս իր մեղքը չի ընդունում: Ավելին, ինքը, վախենալով վրեժխնդրությունից, խնդրում է, որ իրեն պահեն կալանքի տակ:



Վարդիկ Սիրանյան

Ավելացնենք, որ օգոստոսի 8-ին Ախալքալաքիում հրդեհված տների սեփականատերերը փոխհատուցում են պահանջում, ինչպես նաեւ՝ դժգոհում իրավապահ մարմինների աշխատանքից:

*Պատրաստեց ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵՆ*

***«Վրաստան» թերթի խմբագրությունը իր ցավակցությունն է հայտնում միջադեպի արդյունքում զոհված Վարդիկ Սիրանյանի հարազատներին, մերձավորներին ու բարեկամներին:***